

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №3-4 (28-29) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 316 : 81'23

ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՀԵՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հ. Ժ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան
0002, Երևան, Թումանյան 42
e-mail: anushtovmasyan@yahoo.com

Հայտնի է, որ մարդը դառնում է անհատ և խոսող անհատ հասարակայնացման արդյունքում: Հասարակայնացումը մարդուն հասարակության մեջ ներառելու մշակութային գործընթաց է, որտեղ մարդը յուրացնում է այն գիտելիքներն ու պատկերացումները, որոնք բնորոշ են տվյալ ազգային-մշակութային հանրությանը: Այս գործընթացը ձևավորում է մարդու լեզվական գիտակցությունը, որը իրականում կանխենթադրությանի հենքի ձևավորման գործընթացն է: Կանխենթադրությանի հենքը խոսող անհատի գիտելիքներն ու պատկերացումներն են, որոնցից նա օգտվում է խոսելիս: Կանխենթադրությանի հենքը ազգային-մշակութային առումով նշույթավորված է, քանի որ գիտակցությունը և հետևաբար կանխենթադրությանի հենքը ձևավորող գիտելիքներն ու պատկերացումները կրում են այն ազգի և մշակույթի դրոշմը, որի ներքո իրականացել է տվյալ խոսող անհատի հասարակայնացումը:

Բանալի բառեր. խոսող անհատ, կանխենթադրությանի հենք, մշակույթ, հասարակայնացում, գիտակցություն, աշխարհի պատկեր

Ներկայացված է խմբագրություն 28.10. 2015թ.

20-րդ դարավերջի լեզվաբանական մարդաբանական գիտակարգերի կտրուկ զարգացումը հանգեցրել է նրան, որ լեզվի ուսումնասիրության ցանկացած փորձ ի վերջո հանգում է անհատի հայեցողական-ճանաչողական ունակություններին և նրա հասարակական գործունեությանը: Մեր աշխատությունը ևս գերծ չի մնացել լեզվաբանական ուսումնասիրությունների գերակա ընթացքի ազդեցությունից՝ հայտնվելով այնպիսի մարդաբանական գիտակարգերի խաչմերուկում, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, լեզվամշակութաբանությունը, գործաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը և հանրալեզվաբանությունը:

Ի սկզբանե լեզվաբանական գրականության մեջ շրջանառվում էր *լեզվական անհատ* [1, 2] եզրույթը: Լեզվական անհատը, մեր ըմբռնմամբ, լեզվակիրն է: Ընդ որում, *լեզվական անհատ* և *խոսող անհատ* հասկացությունները հարաբերակցվում են հարացուցային հարաբերություններով. եթե *լեզվական անհատը* անփոփոխակն է, ապա *խոսող անհատը*՝ տարբերակը: Այսինքն՝ ասվածից կարող ենք ենթադրել, որ *լեզվական անհատը* հանդես է գալիս որպես լեզվախոսողության հնարավորություն, իսկ *խոսող անհատը*՝ իրականություն, դրա առկայացում:

Մարդու ճանաչողական, մտահայեցողական այն գործընթացը և դրա արդյունքը, որը սկսվում է նրա ծնվելու պահից և տևում մինչև մահ, որի հետևանքում նրա

գիտակցության մեջ արտացոլվում և ձևավորվում է տարաբնույթ գիտելիքների և պատկերացումների մի ստվար զանգված, մենք անվանել ենք *կանխենթադրության հենք*:

Չողվածի նպատակն է վեր հանել խոսող անհատի կանխենթադրության հենքի ամբողջական բնութագիրը, որով և հիմնավորել ենք խոսող անհատի հաղորդակցվելու, տվյալ իրավիճակում տեքստ կազմելու ունակությունը և դրա կախվածությունը կանխենթադրության հենքից, ինչպես նաև սահմանել ենք հասարակայնացումը՝ որպես կանխենթադրության հենքի ձևավորման նախապայման: Այս նպատակին հասնելու համար չենք կարող չանդրադառնալ «մշակույթ» հասկացությանը, խոսող անհատի հասարակայնացմանը, այսինքն՝ տվյալ ժողովրդի մշակութային աշխարհի մեջ ներգրավվելը և դրա հետևանքում գիտակցության որոշակի տեսակ ձևավորելը: Նշենք, որ գիտակցության և կանխենթադրության հենքի կապն անխզելի է, քանի որ դրանք ձևավորվում են զուգահեռ և պայմանավորում խոսող անհատի հաղորդակցական ներուժակությունը: Հատկանշական է, որ երկուսն էլ ձևավորվում են այն մշակույթի ներքո, որտեղ ապրում է մարդը:

Նախ կցանկանայինք նշել Է. Մեյիի՝ «մշակույթի» սահմանումներից մեկը, համաձայն որի՝ մշակույթը ընկալվում է որպես քաղաքակրթություն՝ վերցված այնքանով, որքանով այն իր մեջ մարմնավորում է ազգային ոգին [3, էջ 466]: Այսինքն՝ մշակույթ հասկացությունը, բացի ազգային քաղաքակրթության հոգեբանական նախապայմանները, ներառում է նաև դրան բնորոշ հստակ դրսևորումները: Մշակույթի այս հայեցակետը մեկ եզրույթի մեջ ամփոփում է քաղաքակրթության այն բոլոր ուղենիշները, կյանքի նկատմամբ դիրքորոշումները և դրա դրսևորումները, որոնք թույլ են տալիս մի որոշակի ազգի, ժողովրդի սահմանել իր տեղը աշխարհում: Մշակույթի տվյալ ըմբռնումը կարևորում է ոչ այնքան այն, թե ինչ է ստեղծել այդ ժողովուրդը, այլ թե ինչպես է իր կողմից ստեղծածը, որին ինքը հավատում է և ապավինում, գործառնում իր կյանքում, և ինչ նշանակություն դա ունի ժողովրդի կյանքում: Քանի որ ժողովուրդները իրենց մտքի, գործողությունների և պատկերացումների մեջ կրում են որոշակի «ձուլածո ձևաչափի», կաղապարի (մատրիցայի) դրոշմը, որոնք տարբեր արտահայատչականությամբ են դրսևորվում քաղաքակրթության տարբեր տարրերի մեջ, ապա ժողովրդին հատուկ մշակույթը քաղաքակրթության տարրերի այնպիսի հավաքածու է, որում կաղապարի դրոշմը առավել ակնհայտ և բացմազանոթեն է արտացոլված [3, էջ 466-477]: Է. Մեյիի կողմից տրված մշակույթի այսպիսի բնորոշումը հաստատում է, որ մի կողմից այն հասարակական երևույթ է, իսկ մյուս կողմից յուրաքանչյուր ժողովուրդ իր մեջ կրում է իրեն բնորոշ վարքաբարքի որոշակի կաղապարային ձևեր:

Մենք հարում ենք մշակույթի այն ընկալմանը, որը ընդունված է մշակութաբանության, լեզվամշակութաբանության և էթնոլեզվամշակութաբանության մեջ: Այս գիտակարգերի՝ մշակույթի ըմբռնումը բացատրում է մարդու հաղորդակցական ունակությունները և դրսևորումները՝ կախված նրա ազգային և մշակութային պատկանելությունից: Այսինքն՝ խոսող անհատին դիտարկում են որպես որոշակի ազգային լեզվամտածական համալիրի, ազգային լեզվական գիտակցության կրող: Ըստ Լ. Գումիլյովի՝ մշակույթը «գիտակցության համակարգ է, որը կապված է որոշակի էթնիկ համակարգի հետ» [4, էջ 91], դա «վարք է, օբյեկտիվորեն նկատելի գործողություններ հասարակական և ֆիզիկական առարկաների նկատմամբ, որոնք բնորոշ են տվյալ մարդկային խմբի բոլոր անդամներին» [5], այն «մարդկանց շփման ձև է», որը «հնարավոր է միայն այնպիսի խմբում, որտեղ մարդիկ հաղորդակցվում են..., մշակույթը նախ ունի հաղորդակցական, և ապա խորհրդանշային բնույթ» [6], և վերջապես դա «զարգացման արդյունքների ամրագրման և հաջորդող սերունդներին փոխանցելու հատուկ ձև է» [7, էջ 6], «հենց մշակույթն է հանդիսանում գիտելիքների փոխանցման բացառապես մարդկային ձևը՝ ժառանգական տիպային և անհատական հիշողության հետ մեկտեղ: Այն հանդես է

գալիս նաև որպես նշանների առաջացման աղբյուր (հետևաբար և իմաստների), որից սնվում է անհատական գիտակցությունը, և այդ նշանների օգտագործման աղբյուր» [4, էջ 92]:

Այսպիսով, մեր կարծիքով խոսող անհատի գիտակցությունը, որը նրա՝ աշխարհի գիտակցական պատկերն է, ունի ազգային-մշակութային կոդմոտորշում և սնվում է մշակույթից՝ այդպիսով ստանալով թե՛ իր նյութական, թե՛ գործառական հենքը: Վերջինս իրականում կանխենթադրության հենքի ձևավորման գործընթացն է:

Այստեղ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ նաև գիտակցության և մշակույթի կապի մասին: Առաջին հայացքից կարող է թվալ, որ գիտակցության և մշակույթի միջև կարելի է հավասարության նշան դնել՝ ելնելով այն փաստից, որ երկուսն էլ տարբերակում են մարդուն կենդանուց: Գիտակցությունն ու մշակույթը իսկապես փոխկապակցված են, բայց նրանց միջև հավասարության նշան դնելը ճիշտ չէ: Պարզենք, թե ինչու: Պատասխանը բխում է այս երեքությունների տարաբնույթ լինելուց՝ առաջինը մեխանիզմ է, միջոց, մյուսը՝ արդյունք: Գիտակցությունը հատուկ է մարդուն, իսկ մշակույթը հարում է նրան: Գիտակցությունը ձևավորվում է հասարակության մեջ, մշակույթը ստեղծվում է հասարակության կողմից կամ ապրում դրանում: Այլ կերպ ասած՝ մարդը՝ որպես երևույթ, ստեղծում է մշակույթը, իսկ մարդը՝ որպես անհատ դառնում է այդպիսին՝ դառնալով մշակույթի մաս, քանի որ «մարդկային ունակությունների զարգացման պատմական արգասիքները ուղղակի տրված չեն մարդուն դրանք մարմնավորող նյութական և հոգևոր մշակույթի նյութական իրողությունների մեջ, այլ միայն որոշվում են դրանցով, ներդրված են դրանց մեջ» [7, էջ 14] և դրանք յուրացնելու ընթացքում մարդը դառնում է անհատ՝ հետզհետե զարգացնելով և հղկելով իրականությունը արտացոլելու իր հատուկ գիտակցական ունակությունը: Վերջինս նշանակում է, որ որքան մարդը հասուն է և զարգացած, որքան մեծ է նրա մեջ արտացոլված աշխարհի գիտակցական պատկերը, այնքան ծավալուն ու բազմաբովանդակ է նրա կանխենթադրության հենքը, որը նրա հաղորդակցման թեմատիկ շրջանակը դարձնում է շատ լայն: Այս առումով կարող ենք համեմատել միևնույն մարդուն իր կյանքի տարբեր փուլերում՝ սկսած մանկահասակ տարիքից մինչև խոր ծերություն: Կանխենթադրության հենքի ծավալմանը զուգընթաց ավելանում է նաև խոսող անհատի գիտակցության ազգային-մշակութային դրոշմը՝ որպես դրա անմիջական կրողի:

Քանի որ յուրաքանչյուր ժողովրդի աշխարհայացքի և աշխարհընկալման հիմքում ընկած է առարկայական իմաստների, հասարակական կարծրատիպերի, ճանաչողական կառույցների համակարգը, ապա մարդու գիտակցությունը միշտ էթնիկապես պայմանավորված է [8]: Էթնոհասարակական-մշակութային գործոնը ի հայտ է գալիս, մասնավորապես, մտքի ձևավորման և ձևակերպման ժողովրդական-էթնիկ ձևի առանձնահատկություններում [9]: Ակնհայտ է, որ այդ գործընթացը, որպես կանոն, գիտակցված չէ, քանի որ հենց ինքը՝ գիտակցության համակարգը, պայմանավորվում է վարքի ազգային կարծրատիպերով և չի գիտակցվում մշակույթի յուրաքանչյուր առանձին ներկայացուցչի կողմից, այսինքն՝ պատկանում է տվյալ ազգային-լեզվամշակութային հանրության կոլեկտիվ անգիտակցական ոլորտին: Մակայն հենց գիտակցության այդ որոշակի համակարգը կամ աշխարհի պատկերն է պայմանավորում այս կամ այն հանրության վարքը և բնորոշում այն [10, էջ 161]: Ելնելով ասվածից՝ կարող ենք եզրակացնել, որ տվյալ լեզվամտածողության կրողը հաղորդակցվում է համաձայն աշխարհի իր պատկերի, իր գիտակցական կադապարի: Այլ կերպ ասած՝ այն հաղորդման տեքստը, որ նա կառուցում է, չի կարող անմիջականորեն իր վրա չկրել այն լեզվական, մշակութային, ճանաչողական գիտելիքը, որով մտածում է տվյալ խոսող անհատը, այսինքն՝ առանց իր կանխենթադրության հենքի:

Այսպիսով, գիտակցությունը կապված է մշակույթի հետ: Գիտակցության առկայությունը անհատի տարբերակիչ հատկանիշներից մեկն է: Անհատը ձևավորվում է հասարակության մեջ հասարակայնացման գործընթացում: Հետևաբար, գիտակցությունը չի կարող իր վրա չկրել հասարակության առանձնահատկությունները, որում այդ անհատը ձևավորվում և կայանում է: Հասարակայնացման այդ գործընթացում անհատը ձեռք է բերում ոչ միայն տվյալ մշակույթի արժեհամակարգը, այլև դրա գնահատողական համակարգը՝ դրական/բացասական: Պատկերացումները ազգային տեսանկյունից միշտ նշույթավորված են: Օրինակ՝ համեմատենք «կով» հասկացության ընկալումը հարանշանակային առումով հայ և հնդկական մշակույթներում: Հայ մշակույթում մարդուն, հատկապես աղջկան/կնոջը կով անվանելիս վիրավորանքի բացասական հարանշանակային իմաստ է առաջ գալիս, մինչդեռ հնդկական մշակույթում մարդուն կով անվանելը բարոյախոսություն, հաճոյախոսություն է: Այսինքն՝ հաղորդման տեքստ կառուցելիս հայի մտածական գործընթացները անգիտակցաբար այնպես են ընտրում տեքստի բառային-քերականական կազմը, որ հնարավորինս խուսափեն վերոնշյալ համեմատությունից, եթե, իհարկե, հասցեագրողը հատուկ նպատակ չունի որևէ մեկին վիրավորելու: Այսինքն՝ թե՛ հաճոյախոսության, թե՛ վիրավորանքի դեպքում գործառում է հասցեագրողի աշխարհի լեզվական պատկերը, որը մարմնավորված է նրա կանխենթադրությանի հենքում: Այսպիսով, լեզվական գիտակցությունը միշտ ազգային է:

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ հենց յուրացված մշակույթի ընդհանրությունն է, կամ ավելի ստույգ՝ մշակութային առարկաների տրոհումը մտածական պատկերների և այդ մշակութային առարկաներն ու գործընթացները անվանող լեզվական նշանների ընդհանրությունն է առաջին հերթին թույլ տալիս նշանային հաղորդակցման հնարավորությունը, երբ հաղորդակիցները, միջանձնային հարթություն օգտագործելով նշանների մարմինները, կարող են դրանց զուգորդել նմանատիպ մտածական պատկերներ [11, էջ 9]:

Իհարկե, կան նաև տեսակետներ, համաձայն որոնց՝ մարդու անհատական կենսագործունեությունը այնքան բարդ ու տվյալ անհատի կյանքին հարող երևույթ է, որ հնարավոր չէ, որ միևնույն մշակույթի երկու կրողներ նշանի տակ ընկալեն լրիվ նույն բանը, ունենան նույն պատկերը [12]: Անշուշտ յուրաքանչյուր անհատի անհատական կենսափորձը յուրահատուկ է, բայց ոչ այնքան, որ միևնույն մշակույթի երկու կրողներ յուրացնեին իրենց հատուկ իմաստներ, այլ կերպ ասած՝ ունենային սեփական նշանային համակարգերը: Այդ դեպքում միջանձնային հաղորդակցությունը ուղղակի անհնար կլիներ: Այլ կերպ ասած՝ չնայած անհատական խճանկարների բազմազանությանը, որը կազմված է ընդհանուրի մասերից, գոյություն ունի մի միջուկ, որը համախմբում է տվյալ հասարակության բոլոր անդամներին և բնորոշ է միայն նրանց: Իհարկե, անհատականը արտացոլվում է խոսող անհատի աշխարհի պատկերում, նրա կանխենթադրությանի հենքում, սակայն այդ անհատականի հիմքը նույնպես մշակութայինն է: Անհատական ապրումներից գոյացած մտապատկերները կարող են միայն ընկալումների որոշ տարբերություններ առաջ բերել, այն էլ՝ եթե մտապատկերի հիմքում ընկած ապրումը շատ խորն ու ազդեցիկ է եղել տվյալ անհատի համար: Եվ հակառակը, ելնելով իր սեփական փորձից և իր մտապատկերների անհատական բնույթից՝ նա կարող է խուսափել որոշ նշանների օգտագործումից, կամ շատ օգտագործել դրանք, որոշակիորեն անհատականացնելով տեքստը, սակայն այս դեպքերը նույնպես հարմարեցվում են ընդհանուրի մեջ՝ նպատակ ունենալով մարդկային հաղորդակցությունը դրաձևել հանրամատչելի տվյալ մշակույթի կրողների համար:

Մշակույթը հանրային սեփականություն է, որը փոխանցվում է սերնդից սերունդ, այն ստեղծվում, պահպանվում և փոխակերպվում է հասարակության կողմից: Դրա հետ մեկտեղ մշակույթը իրական երևույթ է, որը ընկալվում և վերարտադրվում է

հասարակության անդամների գործունեության միջոցով: Հետևաբար, մշակույթը հառնում է նաև առանձին անհատին: Ընդ որում, ազգային-լեզվամշակութային հասարակության մշակույթը ի հայտ է գալիս տվյալ հասարակության յուրաքանչյուր անհատի համար որպես մշակութային իրողությունների ամբողջություն, որոնք տրվում են տվյալ մշակութի յուրաքանչյուր կրողի՝ այն տրոհելու համար (մտապատկերներ ստեղծելու և հետագայում դրանց նշանային բնույթ տալու համար): Մշակութային իրողությունների տրոհման արդյունքում մարդու մոտ ձևավորվում են հմտություններ և կարողություններ, որոնք և բնորոշում են նրան որպես այդ հանրության մշակույթի կրող: Այսինքն՝ խոսող անհատի կանխենթադրության հենքը ձևավորվում և զարգանում է տրոհած մշակութային իրողությունների բնույթից և առատությունից: «Հասարակությունը, տրամադրելով իր ամդամներից յուրաքանչյուրին իր մշակույթը՝ դրանց տրոհման և իր իսկ սեփական անհատը ձևավորելու համար, մի կողմից թույլ է տալիս, որ նա իրեն ձևավորի որպես անհատ, հասարակության, մշակույթի կրող, մյուս կողմից՝ սահմանափակում է նրան իր մշակույթի շրջանակով, մշակութային իրողությունների ծավալով» [11, էջ 9-10]: Այսինքն՝ նրա կանխենթադրության հենքը կուտակում է այնքան, որքան մշակույթն է թելադրում և պարտադրում՝ որոշակիորեն սահմանափակելով նրա՝ աշխարհի պատկերը: Իսկ վերջինս, ինչպես արդեն նշել ենք, իր անմիջական ազդեցությունն է թողնում խոսող անհատի հաղորդակցական ներուճակության վրա. կառուցել հաղորդման տեքստը մշակույթի իրողություններին համապատասխան և ընկալել հաղորդման տեքստը՝ ըստ մշակույթի իրողությունների կառուցվածքի:

Ինչպես արդեն վերը նշվել է, հասարակայնացումը մարդու՝ որպես հասարակական անհատի ձևավորման ամենակարևոր պայմանն է: Որպեսզի հասկանանք, թե ինչպես է անհատի հասարակայնացումը նախապայման հանդիսանում նրա կանխենթադրության հենքի ձևավորման համար, անհրաժեշտ է պատասխանել երկու հարցի: Ինչ է հասարակայնացումը և ինչպե՞ս է այն իրագործվում: Հասարակայնացումը երեխայի կողմից նախորդ սերունդների կուտակած ձեռքբերումների յուրացման հատուկ գործընթացն է: Ընդհանուր առմամբ, մարդու գիտելիքները և միտքը ձևավորվում են նախորդ սերունդների իմացական գործունեության արգասիքների յուրացման գործընթացում: Այլ կերպ ասած՝ մարդու գիտելիքները և դրանց կիրառման հետևանքում առաջացած հատուկ ունակություններն ու հմտությունները կենսաբանական ժառանգականության հետևանք չեն, դրանք բացառապես առաջանում են մարդու ակտիվ կենսագործունեության ընթացքում՝ որպես հասարակության անդամ, մշակույթի կրող:

Հասարակայնացման գործընթացում տեղի է ունենում մշակույթի փոխանցում, և մեր կարծիքով՝ հենց այդ փոխանցումն էլ կազմում է հասարակայնացման գործընթացի «բովանդակությունը», անհատի կանխենթադրության հենքի ձևավորման հիմքը: Բացի այդ, հենց այդ փոխանցման հետևանքում էլ տեղի է ունենում մշակույթի կայացումը: Այս առումով Ջ. Դյուին արդարացիորեն նշում է, որ «Ծնվելու պահից մինչև մահ մենք ապրում ենք մարդկանց և իրերի շրջապատում, որն այնպիսին է, ինչպիսին որ կա շնորհիվ այն ամենի, ինչ ստեղծվել և մեզ է փոխանցվել մարդկային նախորդ գործունեության արդյունքում: Երբ այս փաստն անտեսվում է, փորձը դիտարկում են որպես մի բան, որը տեղի է ունենում առանձին անհատի մարմնի կամ հոգու մեջ: Կարծում ենք, կարիք չկա ասելու, որ փորձը չի առաջանում դատարկության մեջ, անհատից դուրս կան աղբյուրներ, որոնք ծնում են փորձի զարգացումը» [13]:

Այսպիսով, մարդու կենսաբանորեն ժառանգված հակտանիշները չեն պայմանավորում նրա հոգեկան ունակությունները, որոնք չկան նրա ուղեղում: Ուղեղը պարունակում է ոչ թե այս կամ այն հատուկ հատկանիշները, այլ այդ հատկանիշները ձևավորելու ունակությունը [14]: Այս առումով է. Սեպիրը իրավացիորեն նշում է. «Արդարացի է, իհարկե, որ մարդը ինչ-որ իմաստով նախատեսված է խոսելու համար,

բայց դա ամբողջությամբ կախված է նրանից, որ նա ծնվում է ոչ միայն բնության, այլև հասարակության մեջ, որը չի կարող նրան չհարմարեցնել իր ավանդույթներին» [3, էջ 28]: Մարդու հոգեկան գործառույթների և ունակությունների ձևավորումը, որոնք բնորոշ են նրան՝ որպես հասարակական էակի, տեղի են ունենում հատուկ ձևով՝ մշակույթի յուրացման արդյունքում: Առանձին անհատների կողմից մարդկային փորձի յուրացումը, որը ձևավորվել է նրա ողջ պատմության ընթացքում և որը մարմնավորված է նրա կոլեկտիվ գործունեության օբյեկտիվ արգասիքների մեջ, ակտիվ գործընթաց է: Մարդու հոգեկանի զարգացման կարևորագույն գործոնը հասարակական ժառանգությունն է [15]:

Այսպիսով, հասարակայնացվելու, որոշակի հասարակության անդամ դառնալու համար անհատը պետք է յուրացնի այդ հասակարության կուտակված փորձը, հոգևոր և նյութական մշակույթի ձեռքբերումները, սովորի կիրառել մարդկության զարգացման ընթացքում ստեղծված օբյեկտիվ իրականության նյութական առարկաները: Այլ կերպ ասած՝ որոշակի ազգային-լեզվամշակութային հասարակության անդամ դառնալու համար անհրաժեշտ է յուրացնել այդ հանրության գիտակցությունը, այսինքն՝ իմաստների համակարգը (լայն իմաստով): Ըստ Ջ. Դելիայի՝ վերջինս իրականացվում է հիմնականում «իր իմաստներն ունեցող մեծ և կայուն հասարակական աշխարհի (որում նրանք ծնվել են) հետ հաղորդակցման և դրան հարմարվելու միջոցով» [16]: Մական, դրանից բացի, անհրաժեշտ է նաև յուրացնել էթնիկ կարծրատիպերը, այսինքն՝ «հարմարվել տվյալ էթնիկ դաշտի ռիթմին» [10, էջ 104]: Ընդ որում, երեխայի համար մշակութային տեղեկատվության ձեռք բերման հիմնական աղբյուրը կամ, ինչպես Ա. Լեոնտևն է անվանել այդ գործընթացը՝ «երեխայի սերտաճմանը քաղաքակրթության մեջ» [17], լեզուն է: Լեզուն հասարակայնացման հզոր գործոն է, միգուցե գոյություն ունեցող գործոններից ամենահզորը [3, էջ 231]: Ըստ երևույթին՝ դա պայմանավորված է նրանով, որ մարդկանց հասարակական գոյությունը կաղապարված է, արտացոլված է լեզվական նշանների համակարգում [18]: Այն, որ մշակույթը «ներառված» է լեզվի մեջ, անհերքելի է, քանի որ լեզուն որպես հաղորդակցման միջոց իր նշանների իմաստների մեջ է ներառում այն ամենը, ինչ կապված է լեզվակիրների մշակութային-ավանդութային հմտության հետ, որը սերնդից սերունդ է փոխանցվում լեզվի միջոցով: Լեզուն ունակ է բառապաշարի միավորների բովանդակության մեջ կուտակել և պահպանել նշանակյալի մասին նախորդ (այսինքն՝ արդեն կուտակված) տեղեկատվությունը [19]: Ասվածից ակնհայտ է, որ լեզուն՝ որպես լեզվակրի լեզվական ունակություն, չի նույնացվում զուտ լեզվական ձևական կանոնների և կարգերի համակարգի հետ, օրինակ՝ այնպիսի կանոնների և կարգերի, որոնց հետ առնչվում ենք մայրենի լեզվի դասերին: Լեզուն հասարակական հիշողության կրողն է, (ոչ լեզվական) իմաստների ամբողջությունը, որոնք գործառում են որպես գործունեության կողմնորոշիչներ (ոչ միայն խոսքային, այլև իմացական) [20], քանի որ խոսքը իր բնությամբ «բնագոյային չէ, ձեռքբերովի է», «մշակութային» գործառույթ է [3, էջ 29]: Ըստ Լ. Շերբայի՝ անհատի հոգեկենսաբանական խոսքային ունակությունը չի կարող ուղղակի հավասարվել նրա խոսքային փորձի (խոսելն ու ընկալելը) հանրագումարին, այն պետք է լինի այդ փորձի յուրօրինակ վերամշակում [21]:

Այսպիսով, վերը շարադրված բոլոր կարծիքները և դրանց մեկնաբանությունները փաստում են մի բան. հասարակայնացումը մարդու՝ աշխարհի մասին գիտելիքներ ձեռք բերելու և դրանով իսկ հաղորդակցվելու ունակություն ձևավորելու միակ միջոցն է: Հասարակայնացումը անհատի ակտիվ հոգեկան գործունեություն է, որի ընթացքում նա լեզվի միջոցով իր գիտակցության մեջ է արտացոլում, ապա նաև ձևավորում հասարակական-մշակութային-ազգային-լեզվական գիտելիքների համալիր՝ կանխենթադրութային հենք: Առանց հասարակայնացման այդ հենքի ձևավորումն ուղղակի անհնար է, քանի որ մարդը ժառանգաբար (ժառանգաբար ասելով՝ այստեղ նկատի ունենք մարդու գենետիկ-կենսաբանական ունակությունը) աշխարհի մասին

գիտելիքներ չի ստանում: Այդ գիտելիքները՝ կանխենթադրությանին հենքը, կուտակային բնույթ ունի և իր մեջ է հավաքում տվյալ անհատի հասարակայնացման ցանկացած արգասիք, այսինքն՝ մշակույթից բխող ցանկացած գիտելիք, և դրա հնարավոր փոխակերպում: Այսինքն՝ այս գիտելիքը զուտ լեզվական չէ, այն քերականական կանոնների համակարգ չէ, այլ լեզվագործունեական բնույթ կրող մշակութային տեղեկատվության համալիր: Հենց այդ լեզվագործունեական բնույթ կրող մշակութային տեղեկատվության հիման վրա է անհատը կարողանում պատշաճ հաղորդակցվել հասարակության մեջ: Հաղորդակցվել լայն իմաստով. և՛ լեզվական, և՛ հաղորդակցական առումներով: Լեզվական առումով ասելով՝ նկատի ունենք, որ խոսող անհատը իր կանխենթադրությանին հենքի լեզվական բաղադրիչի միջոցով կարող է գրագետ տեքստ կազմել, իսկ այդ նույն կանխենթադրությանին հենքի ֆենոմենոլոգիական բաղադրիչի միջոցով տեքստը դարձնել տեղին և տվյալ հաղորդակցական իրավիճակին պատշաճ:

Ուսումնասիրության արդյունքները միանշանակ վկայում են, որ մարդու հասարակայնացումը խոսող անհատի կանխենթադրությանին հենքի ձևավորման հզոր և միակ նախապայմանն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ю.Н. Караулов. VI Международный конгресс МАПРЯЛ. Современное состояние и основы проблемы изучения и преподавания русского языка и литературы. Доклады советской делегации, М., 1982, с. 105-125.
2. B. Johnstone. The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics, Oxford University Press, 1996. 220 p.
3. Э. Сепир. Избранные труды по языкознанию и культурологии. М., 1993, с
4. Н.В. Уфимцева. Этнопсихолингвистические аспекты преподавания иностранных языков. М., 1996, с. 90-96.
5. О.С. Ахманова. О психолингвистике. М., 1957, с. 33.
6. Ю. М. Лотман. Беседы о русской культуре. СПб, 1994, с. 6.
7. А.Н. Леонтьев. Человек и культура. М., 1961.
8. А.А. Леонтьев. Язык и сознание: парадоксальная рациональность. М., 1993, с. 16-21.
9. И.А. Зимняя. Язык и сознание: парадоксальная рациональность. М., 1993, с. 51-58.
10. Н.В. Уфимцева. Этнокультурная специфика языкового сознания. М., 1996, с. 139-162.
11. Е.Ф. Тарасов. Язык и сознание: парадоксальная рациональность. М., 1993, с. 6-15.
12. R. D'Andrade. The Development of Cognitive Anthropology. NY: Cambridge University Press, 1995, 206 p.
13. М. Коул. Культурно-историческая психология. Наука будущего. М., 1997, с. 133.
14. А.Н. Леонтьев. Проблемы развития психики. Изд. 3-е. М., 1972, с. 208.
15. Н.В. Уфимцева. Язык и сознание: парадоксальная рациональность. М., 1993, с. 74.
16. М.Л. Макаров. Интерпретативный анализ дискурса в малой группе. Тверь, 1998, с. 41.
17. А.М. Шахнарович. Этно-психолингвистические аспекты преподавания иностранных языков. М., 1996, с. 97-104.
18. Е.Ф. Тарасов. Проблемы психолингвистики. М., 1975, с. 139-150.
19. В.Н. Телия. Этнопсихолингвистические аспекты преподавания иностранных языков. М., 1996, с. 82-89.
20. А.А. Леонтьев. Этнопсихолингвистические аспекты преподавания иностранных языков. М., 1996, с. 41-47.
21. Л.В. Щерба. История языкознания XIX-XX вв. в очерках и извлечениях. М., 1965. Ч. 2, с. 36

РЕЗЮМЕ
СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ
ПРЕСУППОЗИЦИОННОЙ БАЗЫ

Г. Ж. ТОВМАСЯН

Как известно, человек становится личностью и говорящей личностью в процессе социализации. Социализация есть культурологический процесс внедрения человека в социум, где человек впитывает знания и представления присущие данному национально-культурному обществу. Этот процесс формирует языковое сознание человека, что на самом деле есть процесс формирования пресуппозиционной базы говорящей личности. Пресуппозиционная база суть знаний и представлений говорящей личности, которыми он оперирует в процессе говорения. Пресуппозиционная база всегда национально-культурно маркирована, так как знания и представления, формирующие сознание и тем самым и пресуппозиционную базу, есть результат того народа и той культуры, сквозь призму которой прошел процесс социализации говорящей личности.

SUMMARY
SOCIO-CULTURAL PREREQUISITES FOR THE FORMATION OF THE PRESUPPOSITION
BASE

H. ZH. TOVMASYAN

As known, a human being becomes an individual and a speaking individual in the process of socialization. Socialization is a cultural process of immersing a human being into the society, where he/ she absorbs the knowledge and ideas inherent in the given national-cultural community. This process shapes the linguistic consciousness of the human being, that is actually the process of shaping the presupposition base of the speaking individual. The presupposition base is the bulk of knowledge and ideas of the speaking individual which he/ she makes use of in speech. The presupposition base always bears the national-cultural imprint of the given society since the knowledge and ideas that shape the consciousness and thus the presupposition base are the output of the nation and culture within which the speaking individual was socialized.